

ԱՌԱՇՆԵՐԻ ԵՎ ԱՍԱՑՎԱԾՔՆԵՐԻ ՍԵՐՎԱՆՏԵՍՅԱՆ
«ԽՄԲԱԳՐՈՒՄՆԵՐԸ»
ԲՆԱԳՐՈՒՄ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Բանալի բառեր – առած-ասացվածք, հեղինակային խմբագրում, համարժեք թարգմանություն, թարգմանական հնարք, դիպվածային և բառային պատճենում, դարձվածային համարանություն

Մերվանտեսի բոլոր ստեղծագործությունները ի սկզբանե «դատապարտված են եղել» փառքի: Իսկ ինչո՞վ էր պայմանավորված այդ գրական փառքը: Գաղտնիքներից մեկը թերևս այն է, որ Մերվանտեսի ստեղծագործություններում, մասնավորապես «Դոն Կիխոտում», ենթատեքստային բովանդակությունը տասնյակ անգամ գերազանցում է բուն ստեղծագործության նախնական ընկալումը: Միայն գրողի հանճարեղությամբ կարելի է բացատրել այն «վեղարի» առկայությունը, որով նա անմեղորեն քողարկում էր ցանկացած քննադատություն՝ ուղղված պետությանը, այն է՝ Իսպանիայի թագավորությանը: Չէ՞ որ հայտնի է տվյալ ժամանակաշրջանում խոսքի, երբեմն նույնիսկ մտքի անազատության մասին: Տվյալ ժամանակաշրջանի գրականությունը (մասնավորապես ասպետականը) այնքան հեռու էր իրականությունից, որ բնավ պատահական չէր, երբ «Դոն Կիխոտի» հերոսները տարբեր առիթներով ու տարբեր պարագաներում այդ գրքերն այրում են մեկը մյուսի հետևից: Ինչո՞ւ: Փոխարենը նմանը ստեղծելո՞ւ: Իհարկե ո՛չ:

Մերվանտեսը աշխարհին հայտնի է իր ուրույն գրելաձևով, պատկերավորման եզակի ունակությամբ, բառախաղերի, ինչպես նաև առածների և ասացվածքների ոչ միայն սոսկ կիրառմամբ, այլև դրանք նրբորեն վերափոխելու և կենդանացնելու հմտությամբ: Նա իր ստեղծագործություններում անհամեմատ շատ գործածել է առածներ և ասացվածքներ. նրա իմաստախոսություններից շատ շատերը վերածվել են առածների և ասացվածքների¹, իսկ շատ առածներ էլ հանճարեղ հեղինակի գրչի տակ ստացել են փոքր-ինչ այլ ենթատեքստ:

Քննարկենք այն առածները, որոնք դասական տարբերակից բացի գործածվել են որոշակի փոփոխություններով: Նման առածների և ասացվածքների դրսևորումները քննենք բնագրում՝ համեմատությամբ հայերեն թարգմա-

¹ St' u Castillo de Lucas, Refranes de aplicación médica en el Quijote, Paremia, 5, 1996.

նական տարբերակների¹, որոնք, անշուշտ, շատ հետաքրքիր իրողություններ են ի հայտ բերում:

Մերվանտեսը «Դոն Կիխոտում» երեք անգամ կիրառում է՝ *allá van leyes do quieren reyes*² ասացվածքը (primera parte, cap. XLV, 524, segunda parte, cap. XXXVII, 667, segunda parte, cap.V, 936)³, որը բառացի նշանակում է՝ *այնտեղ են գնում օրենքները, ուր ցանկանում են արքաները*: Ասացվածքը կիրառվում է՝ ցույց տալու իշխանության ուժը: Հեղինակը ասացվածքի այս դասական օրինակը վերը նշված իմաստով կիրառում է երկու դեպքում՝ հմտորեն միահյուսելով այն տեքստին, որտեղ առաջին հայացքից դժվար է նկատել այն սուր սլաքը, որն ուղղված էր այն իշխանությանը, որտեղ օրենքներն են հարմարվում արքաներին: Հեղինակային մյուս օրինակում հանդիպում ենք ճիշտ հակառակ կամ շրջված տարբերակին՝ *allá van reyes do quieren leyes*, որը բառացի նշանակում է՝ *այնտեղ են գնում արքաները, ուր ցանկանում են օրենքները*⁴: Այս դեպքում արդեն խոսքն այն պարզ ճշմարտության մասին է, որ արքաներն են հպատակվում օրենքներին: Ասացվածքի նման վերաձևակերպումը հնարավոր է դարձել այն պատճառով, որ իսպաներենում *rey* (թագավոր) և *ley* (օրենք) բառերը մոտ են իրենց գրությամբ. կարելի է դրանք նույնիսկ հարանուններ համարել, ուստի դրանց տեղափոխությունից առաջացած բովանդակային փոփոխությունը ընթերցողը կարող է և չնկատել: Այսպես բնագրում կարդում ենք. «*“Teresa” me pusieron en el bautismo, nombre mondo y escueto, sin añadiduras ni cortapisas, ni arrequives de dones ni donas, “Cascajo” se llamó mi padre; y a mí, por ser vuestra mujer, me llaman “Teresa Pansa” (que a buena razón me habían de llamar “Teresa Cascaj”, pero allá van reyes do quieren leyes)...*» (II, V, 667):

Ա. Ղազարյանի՝ միջնորդավորված թարգմանության մեջ (այսուհետ՝ Թ-1) հանդիպում ենք. «...Մկրտելիս, ինձ տվել են Թերեսա անունը, մի պարզ ու մաքուր անուն, առանց հավելումների, պճնանքների ու զիզի-պիզիների, ինչպիսիք են այդ դոներն ու մոները: Հորս անունն էր Կասկախո, իսկ իմը՝ քո կնոջը Թերեսա Պանսա (թեպետ իսկականը որ վերցնենք՝ պետք է կոչվելի Թերեսա Կասկախո. դե, ի՛նչ արած, չէ որ «**օրենքը թագավորի ուզած կողմն է ծռում**»)» (II, V, 49, Թ-1):

¹ Մեր ուսումնասիրության համար հիմք են ծառայել Ա. Ղազարյանի՝ ռուսերենից միջնորդավորված և Վ. Սարգսյանի բնագրից կատարված թարգմանությունները: Տե՛ս 1. **Մերվանտես Միզել դե**, Հնարամիտ հիդալգո Դոն Կիխոտ Լամանչեցի, թրգմ.՝ Ս. Ղազարյանի, հ. 1, 2, Երևան, 1950, 2. **Մերվանտես Միզել դե**, Հնարամիտ հիդալգո Դոն Կիխոտ Լամանչեցի, թրգմ.՝ Վ. Սարգսյանի հ. 1, 2, Երևան, 2010:

² Տե՛ս **Carbonell Basset D.**, Diccionario Panhispáico de Refranes, edit. Herder, Barcelona, 2002, p. 274:

³ Օրինակները տրվում են ըստ **Cervantes M. de**, «Don Quijote de la Mancha», del estudio preliminar: F. Lázaro Carreter, edición de Francisco Rico, Barcelona, 2001 հրատարակության:

⁴ Տե՛ս **Cervantes M. de**, «Don Quijote de la Mancha», del estudio preliminar: F. Lázaro Carreter, edición de Francisco Rico, Barcelona, 2001: Այս գրքի ծանոթագրության մեջ նշվում է, որ հեղինակը բնավ պատահական չի վերափոխել առածը (էջ 667, ծնթ. 44):

Այս օրինակում, որտեղ հեղինակը կիրառել է ասացվածքի փոփոխված տարբերակը, թարգմանիչը կրկին կիրառել է դասական ձևը, որից, անշուշտ, անհնար է դառնում կռահել հեղինակի՝ երգիծանքով կիրառած հմուտ հնարը: Կարծում ենք, որ նման թարգմանության պատճառը եղել է թարգմանչի կողմից համատեքստի սխալ ընկալումը, քանի որ բնագրում ոչ թե ասվում է «*իսկ իմը՝ քո կնոջը Թերեսա Պանսա*», այլ *y a mí, por ser vuestra mujer*, բառացի՝ *իսկ ինձ՝ ձեր կինը լինելու պատճառով* (կոչել են): Ասել է թե՛ այս դեպքում անհրաժեշտ էր օրենքին հպատակվել և կրել ամուսնու ազգանունը:

Հայերենում Վ. Սարգսյանի թարգմանության մեջ (այսուհետ՝ Թ-2) ասացվածքի վերափոխված տարբերակը թարգմանվել է հետևյալ կերպ. «...Մկրտեչիս ինձ կոչել են Տերեսա, մի հասարակ և մաքուր անուն, առանց ավելորդ բաների, զարդ ու պաճուճանքների, տարբեր տեսակի դոն-երի ու դոնյա-ների: Հորս անունն էր Կասկախո, իսկ իմը՝ քո կնոջը Տերեսա Պանսա, չնայած, ճիշտ որ խոսենք, պետք է լիներ Տերեսա Կասկախո, բայց, ինչ արած, միշտ չէ, որ **թագավորները օրենքով են շարժվում**» (II, V, 41, Թ-2):

Այստեղ ասացվածքի թարգմանությունը ևս թերի է, չնայած այն առաջին հայացքից կարող է ճիշտ թվալ: Թարգմանիչը «*ճիշտ որ խոսենք, պետք է լիներ Տերեսա Կասկախո*» թարգմանությամբ առաջացնում է մտքի շփոթ, քանի որ թվում է, թե հենց օրենքն է այնպիսին, որ Տերեսան պետք է կրեր իր հայրական ազգանունը: Բացի այդ, ասացվածքը սկսել է *միշտ չէ, որ* արտահայտությամբ, որն ինքնին հակադրվում է ասացվածքի իմաստին և դրանով թարգմանությունը դարձնում է ոչ համարժեք բնագրին: Բնագրում հեղինակը այն կիրառում է հաստատելու համար օրենքի գորությունը, իսկ թարգմանության մեջ այն ընկալվում է այլ կերպ:

Հաջորդ երկու տարբերակներում կարդում ենք. «*No la tenga yo en el cielo-dijo el sobrebarbero- si todas vuestras mercedes no se engañan, y que así parezca mi ánima ante Dios como ella me parece a mí albarda, y no jaez; pero **allá van leyes** etc.. y no digo más*» (I, XLV, 524):

– *Թող ես գրկվեմ երկնքի արքայությունից, եթե դուք, սինյորներ, չեք սխալվում, թող իմ հոգին չներկայանա տերն աստծուն, եթե սա սարք է և ոչ թե փալան: Հիմա ես տեսնում եմ, որ **թագավորների համար օրենք չկա*** (I, XLV, 416, Թ-1):

– *Թող ես կարոտ մնամ երկնքի արքայությանը, սենյորներ, եթե դուք չեք սխալվում,– բացականչեց խեղճ վարսավիրը,– թող իմ հոգին աստծու աչքին երևա այնպես, ինչպես իմ աչքին է փալան երևում այս թամբը: **Բայց օրենքը ձեր ձեռքն է*** (I, XLV, 405, Թ-2):

Ինչպես տեսնում ենք, այս երկու տարբերակներում թարգմանիչները փորձել են համարժեքորեն փոխանցել ասացվածքը, այսինքն՝ դասական համարվող տարբերակը: Մակայն այստեղ էլ հեղինակը կիրառել է մեկ այլ հնար: Բնագրում կարող ենք տեսնել ասացվածքի ընդամենը մի մասը՝ *allá van leyes*, բառացի՝ *այնտեղ են գնում օրենքները*, իսկ թարգմանություններ-

րում գեղջված ասացվածքը տրված է ամբողջությամբ: Այստեղ այլևս չի պահպանվել հեղինակի քննադատական մտքի նուրբ դրսևորումը, ինչն անշուշտ պատահական չէ: Բացի այդ, երկրորդ թարգմանության մեջ ասացվածքը թարգմանվել է չեզոք նկարագրական եղանակով և կորցրել է իր դիդակտիկ, ընդհանրացնող իմաստը:

Երրորդ օրինակում թարգմանիչները կատարել են համարժեք թարգմանություն.

– *Dueñas tiene mi señora la duquesa en su servicio que pudieran ser condesas si la fortuna quisiera, pero allá van leyes do quieren reyes* (II, XXXVII, 936).

– *Իմ սենյորա դքսուհին այնպիսի դուենյաներ ունի, որոնք նույնպես կարող էին կոմսուհիներ լինել, եթե ճակատագրին հաճելի լիներ այդ. բայց օրենքը թագավորի ուզած կողմն է ծովում* (II, XXXVII, 282, Թ-1):

– *Իմ սենյորա դքսուհուն այնպիսի դուենյաներ են ծառայում, որոնք կարող էին կոմսուհի լինել, եթե բախտը կամենար: Մակայն այդ գործերում օրենքը գնում է թագավորի ետևից* (II, XXXVII, 265, Թ-2):

Իր ստեղծագործության մեջ Սերվանտեսը որոշակիորեն քողարկել էր ասացվածքի բուն գաղափարը. նախորդ երկու օրինակներում դա արել էր հմտորեն, ինչպես արդեն նշեցինք, մի դեպքում հարանուն բառերի օգնությամբ, մյուսում՝ ասացվածքը կիրառելով մասնակիորեն: Իսկ հայերենում՝ ն՝ Թ-1-ում, և՝ Թ-2-ում, մենք հանդիպում ենք բացահայտ «հանդիմանության» ուղղված իշխանությանը: Սերվանտեսյան քողարկված փոփոխությունը հայերեն երկու թարգմանություններում էլ ներկայացված է խիստ բացահայտ:

Յուրաքանչյուր ստեղծագործություն ունի իր առանձնահատկությունները՝ լեզվական, գեղագիտական, կառուցվածքային և այլն: Որքան հմուտ է թարգմանիչը, այնքան ավելի հավանական է դառնում համարժեք թարգմանությունը, սակայն կարելի է արդյոք պնդել, որ թարգմանչի հմտությունն է կարևոր առհավաստյան: Կարծում ենք՝ ո՛չ: Երբեմն այս կամ այն լեզվի առանձնահատկությունները թույլ չեն տալիս համարժեքորեն փոխանցել տվյալ գաղափարը, և այդ ժամանակ թարգմանիչը ստիպված է լինում շեղվել բնագրից՝ մի դեպքում թույլ տալով բացթողումներ, մեկ այլ դեպքում՝ կատարելով հավելումներ: Այստեղից ևս բխում են մի շարք հարցեր: Նախ՝ թարգմանիչը պետք է հանդես գա ի՞ր, թե՞ հեղինակի ոճով. նկատի ունենա ընթերցողի գեղագիտական, թե՞ լեզվական պահանջները: Համարժեք բառապաշարային մակարդակում կարող ենք խոսել հարազատ վերարտադրության մասին, իսկ եթե կատարվում է բառապաշարային շեղում, մի՞ թե դրանից չի տուժում ստեղծագործությունն առհասարակ: Գեղարվեստական տեքստերի թարգմանություններին անդրադառնալիս Ջ. Մունենը, բացի լեզվական և գեղարվեստական մակարդակներից, առաջարկում է այն «պատիճավորել» մեկ այլ մակարդակում՝ գեղագիտական¹: Մա բացատրվում

¹ Տե՛ս Mounin G., Les problèmes théoriques de la traduction, Paris, 1963:

է նրանով, որ տեղեկատվական տեքստի լեզվական կառուցվածքը թարգմանության մեջ համակարգվում է թարգմանվող լեզվի նորմերի համաձայն՝ ի տարբերություն գեղարվեստական տեքստի, որի լեզվաբանական կառուցվածքը թարգմանվող լեզվում հանդիպում է արգելքների՝ համաձայն թարգմանող լեզվի նորմերի: Այս դեպքում ընդունելի է դառնում միայն գործառական համարժեքության տարբերակը (*equivalencia funcional*): Ասել է թե՛ գեղարվեստական տեքստում հանդիպում է բառախաղ, ապա մեր գերխնդիրը ոչ թե այն համարժեք բառային միավորներով ներկայացնելն է, այլ մեկ այլ բառախաղով ապահովելը՝ լավագույն դեպքում չհեռանալով բառապաշարային մակարդակից: Այն տեքստերում, որտեղ առավել կարևորվում է բովանդակությունը, միևնույնն է, թարգմանությունը պետք է համապատասխանի թարգմանող լեզվի նորմերին: Սակայն լինում են դեպքեր, երբ ստեղծագործողն ինքն է հեռանում իր լեզվի կանոններից, և երբեմն դրանով է հենց պայմանավորված լինում նրա գրող լինելը:

Դիտարկենք մեկ այլ օրինակ. իսպաներենում հայտնի՝ *al buen callar llaman santo (Sancho)*¹ առածը, որ բառացի նշանակում է՝ *լավ լռողին սուրբ են անվանում*, իսպաներենում ունի ևս մեկ տարբերակ՝ *al buen callar llaman Sancho (santo)*² բառացի՝ *լավ լռողին Սանչո են անվանում*, որտեղ, համաձայն որոշ աղբյուրների, *Sancho* անձնանունը բնավ չի վերաբերում Սերվանտեսի «Սանչոյին»: Սերվանտեսը «Դոն Կիխոտում» գործածել է այս առածի՝ *Al buen callar llaman Sancho* (II, XLIII, 977) տարբերակը, որը, կարծում ենք, բնավ պատահական ընտրություն չէ: Առաջին իսկ հայացքից կարող է թվալ, որ տարբերությունն աննշան է, ընդամենը մեկ բառի փոփոխություն՝ *santo* > *Sancho*: Հետաքրքիր է այն հանգամանքը, որ իսպանացիների մեծ մասին հայտնի է առածի՝ սերվանտեսյան տարբերակը, ավելին՝ ժամանակակից իսպաներեն որոշ առածանիներում³ հանդիպում ենք արդեն առածի՝ *al buen callar llaman Sancho (santo)* տարբերակին, և միայն փակագծերում տրվում է դասական տարբերակում կիրառվող *santo unírr* բառը: Հեղինակը, կիրառելով առածի անձնանունով տարբերակը, որտեղ իր հերոսը կրում էր հենց նույն անունը, փորձել է ամբողջովին հակադրել նրա նախնական արտա-

¹ Տե՛ս **Muñoz S., Zurdo Ruiz M.**, et alli, Refranero Multilingüe: Այս աղբյուրում բերվում են Կոռեասի և Մբարբիի մեկնաբանությունները տվյալ առածի վերաբերյալ, որտեղ, ըստ Կոռեասի, առածում *Sancho* -ն ընկալվում է համարժեք *unírr* (*santo*), *unírr* (*sano*) և *buén* (*bueno*) բառերին: Ըստ Մբարբիի՝ առածում կիրառված *Sancho* անձնանունը վերաբերում է Սանչո Երկրորդ թագավորին:

² Տե՛ս **Bizzari H.**, Diccionario de Proverbios Cervantinos, Universidad de Alcalá, Alcalá de Henares 2015. Página web: www.uah.es Այստեղ առածի ծագման մասին նշվում է, որ, ըստ որոշ աղբյուրների, այն հենց Դոն Կիխոտի զինակիր Սանչոյի մասին է, չնայած հնարավոր է, որ այն Սանչո Երկրորդ թագավորի մասին լինի, որին գրեթե սուրբ են համարել:

³ Տե՛ս **Carbonell Basset D.**, Diccionario Panhispánico de Refranes, edit. Herder, Barcelona 2002, p. 430:

հայտած իմաստին. չէ՞ որ «իբ Սանչոն» երբեք չէր կարողանում «լռել»: Ինչպե՞ս է առածը ներկայացվում հայերեն թարգմանություններում:

Թ-1-ում հանդիպում ենք՝

– Աստված վկա, սինյոր,– պատասխանեց Սանչոն,– ձերդ ողորմածությունը իզուր է բարկանում: Գրողը տանի, ինչո՞ւ եք գայրանում, երբ ես օգտվում եմ իմ սեփական կարողությունով: Չէ որ մի այլ կապիտալ ես չունեմ, բացի առածներից և կրկին առածներից: Հենց այս բուպեիս էլ մի քանիսը գլուխս են խցկվում և բոլորն էլ տեղին ու սազական, ոնց որ քթոցի մեջ դարսած տանձեր: Բայց ես այդ առածները չեմ ասի, որովհետև **«Սանչո է նա – ով կյանքում լռակյաց է»** (II, XLIII, 319, Թ-1):

Ինչպես նկատում ենք, միջնորդավորված թարգմանության մեջ պահպանվել է առածի բովանդակային կողմը, բայց տուժել է արտահայտման ձևը:

Թ-2-ում թարգմանությունը հետևյալն է.

– Վկա է մեր տեր աստված,– պատասխանեց Սանչոն,– որ ձերդ ողորմածությունը անտեղի է բարկանում: Բայց, գրողը տանի, ինչո՞ւ եք բարկանում, երբ ես օգտվում եմ իմ սեփական ունեցվածքից, երբ ես ուրիշ ոչ մի բան չունեմ, բացի առածներից և կրկին առածներից: Հենց այս պահին մի չորս առած ուզում են բերանիցս դուրս պրծնել, բոլորն էլ շատ տեղին ու պատեհ, բայց չեմ ասի, **քանզի բարի լռակյացներին սուրբ են ասում** (II, XLIII, 298, Թ-2):

Այստեղ արդեն թարգմանիչը չի պահել հեղինակի կողմից այդքան հմտորեն կատարված ընտրությունը, և արդյունքում ունենք՝ *լռակյացին սուրբ են ասում* տարբերակը, որը, անշուշտ, հեռացել է բնագրից՝ չպահպանելով հեղինակի «Սանչոյի» և առածի «Սանչոյի» հակադրությունը:

«Դոն Կիխոտում» առածն ու ասացվածքը, ունենալով մեկանգամյա գործածություն, ենթարկվում են հեղինակային «խմբագրման» (այդպես էր վերոհիշյալ օրինակում) և կրկնվելով երկու, երեք կամ բազմակի անգամներ՝ երբեմն ենթարկվում են փոփոխման, երբեմն՝ ներկայանում դասական տարբերակով: Հաշվի առնելով իսպաներենում առածների և ասացվածքների առատությունը՝ հարց է առաջանում՝ արդյոք հեղինակը չէր կարող փոխարինել դրանք մեկ այլ՝ հոմանիշ առածով: Սակայն կարծում ենք, որ դա ևս հեղինակի հնարներից մեկն է. նա, բերելով առածների դասական տարբերակները, ընթերցողին հիշեցնում է դրանց մասին, այնուհետև միաձուլում դրանք իր հերոսների, իրավիճակների և այլ հանգամանքների հետ: Այսպես՝ «Դոն Կիխոտում» հինգ անգամ հանդիպում է՝ *Desnudo nací, desnudo me hallo, ni pierdo ni gano* ասացվածքը, որ բառացի նշանակում է՝ *Մերկ ծնվել եմ, մերկ էլ կմեռնեմ, ոչ կորցրել եմ, ոչ էլ՝ շահել*: Այս ասացվածքը կիրառողը բոլոր դեպքերում Սանչոն է, հերոս, որի լեզուն համեմված է ժողովրդախոսակցական տարբերով: Առածի խրատական իմաստը այնքա՛ն հարազատ է Սանչոյին.

Sancho nací y Sancho pienso morir (II, IV, 661).

Ես Մանչո եմ ծնվել, Մանչո էլ ուզում եմ մեռնել (II, IV, 36, Թ-2):

Այնուհետև գործածություններից մեկում, միանգամայն ճիշտ և համոզիչ, երկու թարգմանիչներն էլ նախապատվությունը տվել են *մերկ*-ի փոխարեն *տկլոր* բառին:

– *Ni yo lo digo ni lo pienso- respondió Sancho-. Allá se lo hayan con su pan se lo coman: si fueron amancebados o no, a Dios habrán dado cuenta. De mis viñas vengo, no sé nada, no soy amigo de saber vidas ajenas, que desnudo nací, desnudo me hallo: ni pierdo ni gano* (I, XXV, 273).

– *Ես որ բոլորովին այդ չեմ մտածում և չեմ ասում,- պատասխանեց Մանչոն: – Թող նրանք այդ քսեն հացին և ուտեն: Միրահարներ եղել են թե ոչ – նրանք պատասխան կտան աստծուն: Դա իմ գործը չէ, ես բան չգիտեմ և ուրիշների գործը չեմ էլ ուզում իմանալ: Ով որ գնում է և խարդախում, նա իր սեփական քսակում զգում է այդ: Ես տկլոր եմ ծնվել և հիմա էլ տկլոր եմ: Ես ոչ տարել եմ, ոչ էլ տանուլ տվել* (I, XXV, 209, Թ-1):

– *Ես ոչ այդ ասողներից եմ, ոչ էլ մտածողներից,- պատասխանեց Մանչոն,- իրենց ճաշն եփած է, թող իրենք էլ ուտեն, եթե սիրային կապեր են ունեցել, աստծո առաջ պատասխան տված կլինեն, ես իմ գործերի մասին եմ խոսում և ուրիշների հետ գործ չունեմ: Ես չեմ սիրում խառնվել սրա-նրա անձնական կյանքին: Ով առևտրի մեջ դիմացինին խաբում է, առաջին խաբվածն ինքն է: Ես տկլոր եմ ծնվել և հիմա էլ տկլոր եմ, ոչ շահել եմ, ոչ էլ տարվել* (I, XXV, 205, Թ-2):

Թարգմանության այլ օրինակներում գործածված է *մերկ* տարբերակը: Մեր կարծիքով՝ *տկլոր* բառի գործածությունը ավելի տիպական է դարձնում Մանչոյի խոսքը, և թերևս ճիշտ կլիներ, որ մնացած կիրառություններում ևս մնար *տկլոր*-ը, մինչդեռ նախապատվությունը տրվել է *մերկ*-ին, ինչպես՝

Pero digan lo que quisieren, que desnudo nací, desnudo me hallo: ni pierdo ni gano (II, VIII, 689).

Մակայն թող ասեն, ինչ ուզում են: Մերկ եմ ծնվել, մերկ էլ կմնամ, չեմ շահել, չեմ էլ տանուլ տվել (II, VIII, 68, Թ-1):

Մակայն թող ասեն՝ ինչ ուզում են: Ես մերկ եմ ծնվել, մերկ էլ կմնամ, չեմ շահել, չեմ էլ տանուլ տվել (II, VIII, 59, Թ-2):

Ասացվածքի այս տարբերակներում համեմատելի են նաև *կորցնել, տանուլ տալ* և *տարվել* հոմանիշները. առաջինը և երկրորդը բնորոշ են գրական լեզվին, իսկ վերջինը՝ խոսակցականին: Մանչոյի բառապաշարին ներդաշնակում է, իհարկե, *տարվել* ձևը, որն առկա է Վ. Սարգսյանի՝ բնագրից կատարված թարգմանության մի օրինակում: Հաջորդ օրինակում *շահել* բառի փոխարեն նախապատվությունը տրվել է *տանել*-ին:

Vuestras mercedes se queden con Dios, y digan al duque mi señor que desnudo nací, desnudo me hallo: ni pierdo ni gano (II, VIII, 1065).

Մնացեք աստծով, ձերն ողորմածություններ և հաղորդեցեք իմ տիրոջը՝ դուքսին, որ *ես մերկ ծնվել եմ և մերկ էլ մնացել, ոչինչ չեմ տարել և տանուլ էլ չեմ տվել* (II, LIII, 398, Թ-1):

Աստված ձեզ հետ, ձերդ ողորմածություններ, և հաղորդեցեք իմ տեր դքսին, *որ մերկ ծնվել եմ և մերկ էլ մնացել, ոչ շահել եմ, ոչ կորցրել* (II, LIII, 375, Թ-2):

Իսկ ստորև տրվող օրինակում Սերվանտեսը ասացվածքը հմտորեն խմբագրել է, որն էլ հարազատորեն վերարտադրվել է հայերեն թարգմանություններում որոշակի տարբերություններով:

– Yo, señores, porque lo quiso así vuestra grandeza, sin nungún merecimiento mío, fui a gobernar vuestra ínsula Barataria, en la cual *entré desnudo, y desnudo me hallo: ni pierdo ni gano* (II, LV, 1082).

Իմ սինյորներ, ձերդ ողորմածությունների կամքով և առանց որևէ արժանիքներ ունենալու, ես մեկնեցի ձեզ պատկանող Բարատարիո կղզին կառավարելու: *Մերկ մտա իմ տիրության իրավունքների մեջ, մերկ էլ մնացի՝ ինչպես հիմա եմ, ոչ տարա, ոչ էլ տանուլ տվեցի* (II, LV, 413, Թ-1):

Իմ սենյորներ, ձերդ մեծությունների կամքով ես մեկնեցի ձեզ պատկանող Բարատարիա կղզին կառավարելու: *Մերկ մտա այնտեղ և մերկ էլ դուրս եկա, ինչպես հիմա եմ, ոչ տարել եմ ոչ տարվել* (II, LV, 388, Թ-2):

Դիցուք, հայերեն երկու թարգմանություններում կատարվել է դիպվածային պատճենում¹, և բոլոր գործածություններում առկա է պատկերային միևնույն համակարգը: Այս թարգմանության տեսակը հնարավոր է լինում միայն այն դեպքում, երբ բառային միավորները համապատասխան զաղափարը կարողանում են փոխանցել առանց խախտելու իմաստային արժեքը: Նման դեպքերում թարգմանվող առածները և ասացվածքները պետք է ունենան որոշակի հանգավորում, որպեսզի ընթերցողն այն ընկալի որպես հեղինակի կողմից գործածված ոճական հնար: Եթե թարգմանիչը առածը կամ ասացվածքը տալիս է պարզապես բառացի թարգմանությամբ (ըստ բառային միավորների համապատասխանության), ապա միշտ չէ, որ դրանք ընկալելի կարող են լինել ընթերցողին:

Բերենք մեկ ուրիշ օրինակ. իսպաներենում ունենք *todo saldrá con la colada*² առածը, որը բառացի նշանակում է՝ *ամեն ինչ լվացքի հետ դուրս կգա*, և ամփոփում է երկու զաղափար. առաջին՝ *ի վերջո արածի համար պետք է հատուցում ստանալ*, երկրորդ՝ *ժամանակի ընթացքում ամեն ինչ պարզվում է*: «Դոն Կիխոտում» առածը կիրառվում է երկու անգամ: Առաջին անգամ այն ժամանակ, երբ դոն Կիխոտը բարկանում է և հանդիմանում Սանչոյին անհարկի կատակների համար, և զգուշացնում նրան, որ բազմիցս հորդորել է հնարավորինս քիչ խոսել, որին ի պատասխան՝ Սանչոն կիրառում է առածը:

– A lo menos –respondió Sancho– supo vuestra merced poner en su punto el

¹ Տե՛ս **Նազարյան Ա., Բաղդասարյան Հ.**, Թարգմանաբանական ուսումնական ձեռնարկ, Երևան, 2000:

² Տե՛ս **Bizzarri H.**, Diccionario de paremias españolas, Universidad de Alcalá, Alcalá de Henares. Página web: www.uah.es:

lazón, apuntándome a la cabeza, y dándome en las espaldas, gracias a Dios y a la diligencia que puse en ladearme. Pero vaya, que *todo saldrá en la colada*; que yo he oído decir: «Ese te quiere bien que te hace llorar» (I, XX, 220).

– *Համենայն դեպս,– պատասխանեց Մանչոն,– ձերդ ողորմածությունը լավ է նիզակը գործածում. դուք նշան էիք դրել իմ գլխին և դիպաք մեջքիս միմիայն շնորհիվ աստծու և այն ճարպկության, որով ինձ հաջողվեց մի կողմ թռչել: Է, դե լավ, լվացքից ամեն բան կմաքրվի. գուր չի ասում առածը՝ ով որ սաստիկ սիրում է, սաստիկ էլ խփում է* (I, XX, 162, Թ-1):

– *Ամեն դեպքում,– պատասխանեց Մանչոն,– ձերդ ողորմածությունը լավ հաջողացրեց նիզակով նշան բռնել գլխիս, բայց խփել մեջքիս, և դա եղավ շնորհիվ աստծո և իմ ճարպկության, որ կարողացա մի կողմ թեքվել: Անցած լինի, լվացքից հետո ամեն բան կպարզաջրվի, և գուր չեն ասում՝ ով քեզ լացացնում է, նա քեզ սիրում է* (I, XX, 164, Թ-2):

Ինչպես տեսնում ենք, երկու թարգմանիչներն էլ կատարել են առածի բառացի թարգմանություն, բառային որոշակի տարբերությամբ. իսպաներենում *դուրս կգա* ձևը հայերենում մի դեպքում տրվել է *կմաքրվի*, իսկ մյուսում՝ *կպարզաջրվի*, որոնք ինչ-որ չափով, բայց ոչ ամբողջապես, արտահայտում են իսպաներեն բառի իմաստը: Տվյալ դեպքում մենք կառաջարկեինք առածային կիսապատճենում՝ *լվացքից հետո ամեն ինչ ջրի երես դուրս կգա*:

Հարկ է նշել, որ թարգմանական նման հնարը կարելի է կիրառել, երբ թարգմանող լեզվում չունենք առածի զուգահեռ համարժեքը կամ առածային համաբանությունը: Վերը նշված օրինակին կարելի է համարժեք համարել հայերեն հետևյալ տարբերակները՝ առածի առաջին նշանակության դեպքում՝ «*ինչ-որ ցանես այն կհնձես*», «*ինչ-որ անես առաջդ կգա*», «*ինչ-որ ձեռով տաս, հոգով կստանաս*»¹, երկրորդի դեպքում՝ «*պղտոր ջուրը որքան հոսում, մաքրվում է*», «*ամեն ինչ ջրի երեսն է դուրս գալիս*»:

Այսպես, եթե առաջին կիրառության դեպքում առածի նշանակությունը որոշակիորեն վիճահարույց է, այսինքն՝ կարող է ընկալվել և՛ *պարզվել*, և՛ *հատուցում ստանալ* իմաստներով, ապա երկրորդ կիրառության դեպքում հեղինակը անպայմանորեն նկատի ունի երկրորդ իմաստը²: Այսպես՝ բնագրում կարդում ենք՝

No ha sido Dios servido de depararme otra maleta con otros cien escudos como la de marras, pero no te dé pena, Teresa mía, que en salvo está el que repica, y todo saldrá en la colada de gobierno (II, XXXVI, 932).

Իսկ թարգմանություններում՝

Աստված չհաճեց ինձ տալ մի պայուսակ՝ մեջք հարյուր էսկուդո, ինչպես որ եղավ նախորդ անգամ, բայց դու մի նեղվիր, սիրելի Տերեսա, խոսողների

¹ Ղանալանյան Ա., Առածանի, Երևան, 1960, էջ 122:

² Տե՛ս Bizzarri H., նշվ. աշխ., էջ 139: Ըստ նշված աղբյուրի՝ Մանչոն իր կնոջն ուղարկած նամակում ասում է, որ ինքն ի վերջո պետք է հատուցում ստանա:

ձայնը տաք տեղից է գալիս: Թող ես նստեմ նահանգապետի այթոռին, **հետո ամեն ինչ կերևա** (II, XXXVI, 260, Թ-2):

Այստեղ, սակայն, թարգմանիչը կրկին նախապատվությունը տվել է առաջին՝ *պարզվել* իմաստին, իսկ մյուս՝ միջնորդավորված թարգմանության դեպքում ունենք՝

*Աստծուն հաճելի չէր, որ ես քեզ հարյուր չերվոնեցով լի մի ճամպրուկ էլ ուղարկեի, անցյալ անգամվա նման. Բայց դու մի վշտանա, սիրելի Տերեսա, ահագանգ տվողը անվտանգ տեղում է նստած լինում: Թող մի ես նահանգապետ դառնամ, **կտեսնես ինչ շորեր կլվանանք** (II, XXXVI, 277, Թ-1):*

Այս թարգմանության դեպքում կարծես թարգմանիչը նկատի ունի մի երրորդ իմաստ, որտեղ ընկալվում է ինչ-որ սպասելիքների ակնկալիք: Նման կարծիքը թերևս հաստատվում է ռուսերեն լավագույն թարգմանության տեքստով¹, որտեղ կարդում ենք՝

Богу было неужгодно послать мне еще один чемоданчик с сотней эскудо, как в прошлую поездку, но ты, милая Тереса, хе огорчайся, козла пустили в огород и в должности губернатора мы свое возьмем (II, XXXVI, 272, Թ-3).

Նման առաձները և ասացվածքները կարող են այդքան էլ ընկալելի չլինել բառացի թարգմանված տարբերակներում: Մեկ այլ խնդիր է, երբ թարգմանիչը ինքը ճիշտ չի ընկալում դրանք: Այսպես՝ «Դոն Կիխոտում» գործածվել է՝ *Buenas son mangas después de Pascua* առածը, որ բառացի նշանակում է՝ **Ընծաները Չատիկից հետո էլ լավն են լինում**: Առածի իրատական իմաստն այն է, որ *նույնիսկ աննշան նվերները պետք է գնահատելի լինեն*, ինչպես նաև այն, որ *լավ են նաև ուշ իրականացած ցանկություններն ու երազանքները*: Առածը իսպանական մշակույթում լայն տարածում ունի, քանի որ Չատիկին միմյանց նվերներ տալու ավանդույթը գալիս է շատ հնուց:

Իսպաներենում *manga*² բառը, բացի բառացի **թևք** իմաստից, ունի նաև **ընծա** նշանակությունը: Բնագրում կարդում ենք.

– *Es liberal en extremo,– dijo don Quijote,– y si no te dio joya de oro, sin duda debió de ser porque no la tendría allí a la mano para dártela; pero buenas son mangas después de Pascua*³ (I, XXXI, 360).

Իսկ հայերեն թարգմանությունները տալիս են՝

– *Նա սովորաբար առատաձեռն է,– ասաց դոն Կիխոտը: – Երևի այդ վայրկյանին ձեռքի տակ թանկագին իրեր չեն եղել, դրա համար էլ չի տվել քեզ: Ասենք՝ **թևքերը Չատիկից հետո էլ պետքական են լինում** (I, XXXI, 279, Թ-1):*

¹ Ст'у Сервантес Мигель де, Хитроумный Идальго Дон Кихот Ламанчский, пер. Н. Любимова, ч. 2, М., 1970, с. 272:

² Ст'у Muñoz S., Zurdo Ruiz M., Ayúcar et alli, նշվ. աշխ.:

³ Ст'у Cervantes M. de, «Don Quijote de la Mancha», del estudio preliminar: F. Lázaro Carreter, edición de Francisco Rico, Esp. 2001, p. 360: Այստեղ ծանոթագրության մեջ տրվում է, որ *թևք*՝ *manga* բառը տեքստում համարժեք է *հավելլավձար*՝ *aguinaldo*, *թեյավձար*՝ *propina* բառերին:

– Նա չափազանց առատաձեռն է,- ասաց դոն Գիխտը,- երևի այդ պահին ձեռքի տակ թանկարժեք իրեր չեն եղել, որ տար քեզ: **Մակայն գրպանները Ջատկից հետո էլ են պետք գալիս** (I, XXXI, 273, Թ-2):

Ինչպես տեսնում ենք, սա հենց վառ օրինակ է այն բանի, որ բառացի թարգմանությունները կարող են ամբողջապես աղավաղել առածի կամ ասացվածքի իմաստը. հայ երկու թարգմանիչներն էլ ուշադրություն չեն դարձրել *manga* > *ընծա* նշանակությանը և ակամա կատարել են առածի սխալ թարգմանություն:

Թարգմանության ժամանակ թարգմանչի առանձնակի ուշադրությանը պետք է արժանանան ազգային տարրեր պարունակող առածներն ու ասացվածքները: Դրանք շատ հաճախ կարող են ընկալելի լինել միմիայն տվյալ ժողովրդի համար: Հետաքրքիր է, որ հայերենում մենք չունենք առածի համարժեք տարբերակը: *Manga* -ի *ընծա* նշանակությունը հաշվի առնելու դեպքում թարգմանիչները այն կարող էին փոխարինել դարձվածային համարանություններով, որից չէր տուժի բովանդակությունը: Այսպես, առածին համարժեք հայերենում կարող էին համարվել «*ուշ լինի, նուշ լինի*», «*ուշ լինի, անուշ լինի*» տարբերակները:

Ավելացնենք նաև այն, որ հայերեն լեզվամտածողությունը ունի առածի՝ ճիշտ հակառակ իմաստով տարբերակները՝ «*հետ Ջատկին, հալվան էժանագին*», «*կարմիր ձուն Ջատիկին կսագի*», «*ճաշից հետո հարիսան էժան կլինի*», «*աքլորը որ անժամանակ կանչե, գլուխը կկտրեն*»¹ և այլն:

Սերվանտեսի ստեղծագործություններում առածների և ասացվածքների «խմբագրումների» այն մասը, որը հեղինակային է, կատարված է բնավ ոչ ինքնանպատակ. դրանք ունեն խոր ենթատեքստ, ասելիքի դիպուկություն և գաղափարական և հուզական-արտահայտչական հագեցվածություն: Հայ թարգմանիչները հիմնականում կարողացել են պահել սերվանտեսյան «խմբագրումները», սակայն երբեմն՝ ոչ այնքան:

Ася Хачатрян – Сервантесовские «редактирования» пословиц и поговорок в подлиннике и их армянские переводы

В статье рассматриваются те пословицы и поговорки, которые были отредактированы пером Сервантеса. Такие окказиональные видоизменения осуществлялись для того, чтобы высказывания автора становились более адресными и образными, а текст обогащался новыми семантическими и эмоциональными нюансами. Армянские переводчики: и А. Газарян (опосредованно), и В. Саргсян (по оригиналу), в своих переводах в основном смогли правильно воспроизвести эти сервантесовские «редактирования» и довести их до читателя, однако иногда допускали погрешности, искажая искомое значение пословиц и поговорок в тех случаях, когда в армянском не находили равноценный вариант данной пословицы или поговорки.

¹ Տե՛ս **Ղանալանյան Ա.**, նշվ. աշխ., էջ 135:

Asia Khacharyan – *Cervantes's «Editings» of Proverbs and Sayings in the Original Text and Armenian Translations*

The article focuses on the proverbs and sayings 'edited' by Cervantes. Using the technique of occasional calque the author made the ideas sharper and more objective giving a new sense and connotation to the text. Armenian translators A. Ghazaryan (indirect translation) and V. Sargsyan (literary translation) mostly succeeded in their translations and managed to present the Armenian reader with the appropriate versions of the 'editings' by Cervantes. However, in case there was no equivalent of the proverb or saying, both translators made occasional mistakes, thus, distorting the main idea of the proverbs and sayings.